Ը. ՏԱՐԻ 2277 ԹՈՒԱԿԱՆ ՀԱՅՈՑ 7 ՆԱԽԱՊԱՐԳ 4384 17 ՕԳՈՍՏՈՍ 1891 24 ՄՈՒՀԱՐՐԷՄ 1309 ՇԱԲԱԹ

40 ՓԱՐԱ

ՆԱՄԱԿ ԿԱՄ ՈՐ ԵՒ ԻՑԷ ԴՐՈՒԹԻՒՆ ՊԷՏՔ Է ՈՒՂՂԵԼ
ԱՌ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՐԵՒԵԼՔ ՕՐԱԳՐԻ
Գալաթիա, Կ. Պոլիս

درعلیه ده غلطه ده آره‌وله‌ك خانده نورادونكيان
خزينه‌سی ادارهسنه

Direction du Journal AREVELK
Galata, CONSTANTINOPLE

ԱՐԵՒԵԼՔ
ՕՐԱԳԻՐ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

ԳԻՆ ԱՐՈՒԱԾԻ

Կ. Պոլսոյ Տարեկան գահեկան արծաթ 150
» » Վեցամսեայ » » 75
» » Եռամսեայ » » 40
Օտար երկիրներէ Տարեկան Ֆրանք 56
» » Վեցամսեայ » » 28
Մէկ թուղթի վրայ մամուլով տպագր. Տարեկան Օտ. Ոսկի 2
առաւելագոյն թղթատարի չափը մինչև Դրչ. 50

Խմբագրութիւնս ուղղուած նամակ կամ գրութիւնք չեն տարուիր։

Les annonces sont reçues
AUX BUREAUX DU JOURNAL

Աբէլեանի ներկայ համարը, բաց ի իւր սովորական նիւթերէ, կը պարունակէ նաև հետեւեալ յօդուածները.

ԱՍԴՈՒԱ — Գրական վէպ Քարվէն Սիլվայի—Թարգմ. Թ. Թ.

ՄԻՍԱՔԵԱՆ. Հատուածներ իր գրածներէն.—Քանի մը խօսք իրրեւ վերջաբան. ՀՐԱՆՏ

ԲՐՕՎԱՆՍ ԵՒ ՄԻՍԹՐԱԼ — «Միրէյլի առթիւ. Ց. Վ. Պաշմեան

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՔ

Մայրն առ իւր մանկիկն որ ննջէ
ԱՆԱՑԻՍ

Առ Մ. եւ Ա.

Է. Ե.

ՄԽԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ. (Խմբագրական Մշակի).

Կը յիշեցուցնենք զԱրեւելքը ձեռքէ գեղեցիկն որ չմոռնան ներկայ թերթին հետ լրագրավաճառին պահանջել նաև յայտնուածը որ անցեալ թուղթի վրայ տպուած է։ Ամբողջին գինը 40 փարա։

Կ. ՊՈԼԻՍ, 17|29 ՕԳՈՍՏՈՍ · 1891

ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԵՒ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՊԱՐՏԱՒՈՐՈՒԹԻՒՆՔ ԹՈՒՐՔԻՈՅ ՀԱՅՈՑ

Էջմիածնի Սինոդը շրջաբերականաւ պատուիրած է ամէն թեմերու հայ ժողովրդեան որ պատգամաւորներ ընտրեն և Ս. Էջմիածին ղրկեն, որպէս զի 1892 մայիս 16ին կատարեն Ամենայն Հայոց Կաթողիկոսի համազգային ընտրութիւնը։

Խնդրոյն կարեւորութեան համապատասխան լուրջ խմբագրական մը կը նուիրէ Արշէշան իւր օգոստոս 6ի թուով, «ինչպէ՞ս պէտք է մասնակցին Տաճկահայերը Կաթողիկոսական նոր ընտրութեան» խորագրին ներքեւ (*)։

Նախ կը յիշեցնէ թէ վերջին կաթողիկոսական ընտրութեան ժամանակ Կ. Պոլսոյ Ազգային ժողովոյ դրժողութեան արդիւնքը չընդունուեցաւ Էջմիածին. Թուրքիոյ Հայոց երկու պատգամաւորներուն թոյլ չտրուեցաւ համայն Թուրքիոյ Հայոց անուամբ քուէ տալ, այլ միայն Պոլսի թեմի անուամբ, ուստից եկած էին։

Արշէշան հակառակութիւն կը տեսնէ Ռուսիոյ Հայոց օրէնքին և Թուրքիոյ Հայոց օրէնքին մէջ, և կը քննէ թէ արդարութիւն և բանաւորութիւն ո՛ր կողմն են։

Մեր յարգոյ պաշտօնակցին յօդուածին եղրակացութեանց լիովին համամիտ ենք. Կարծիքներն այսօր մեծապէս բարեփոխուած են. Ամենուստ կը ճանչնի թէ Հայ եկեղեցւոյ լաւագոյն աւանդութեանց համաձայն և իւր ամենէն կարեւոր շահերուն նպաստաւոր կը լինի եթէ ամէն թեմերէ եկեղեցական և աշխարհական պատգամաւորներ դիմեն Իջման Տեղին, այն եկեղեցական կեդրոնին մէջ կատարելու հայրապետական ընտրութիւնը։

Մեր յարգոյ պաշտօնակցին սիրայն հոն է միայն երբ կը կարծէ թէ Սահմանադրութիւնը պարտ կը դնէ որ հայրապետական ընտրութիւնն անպատճառ Կ. Պոլսոյ մէջ կատարի։ Սահմանադրութիւնն այնպիսի անտեղութիւն մը չի պարունակեր։ Ազգային ժողովոյ պաշտօնը սահմանելով, կ'ըսէ պարզապէս թէ Ազգային ժողովը «կը մասնակցի Էջմիածնի Կաթողիկոսական ընտրութեան»։ Այս ըսել չէ՛ բնաւ թէ ընտրութիւնն Ազգային Ժողովոյ մէջ կը վճռուի կը լմննայ, կամ կիսովին ի Կ. Պոլիս կը կատարուի։

Ընդհակառակն, Սահմանադրութիւնն հիմնական տրամադրութիւններ կը պարունակէ որք Ազգային Վարչութեան վրայ պարտ կը դնեն Հայաստանեայց Եկեղեցւոյ օրէնքներն և աւանդութիւնները անխախտ պահել և Ազգը պահել պահպանել Մայր Աթոռոյ հետ հաւատարիմ կապակցութեան մէջ։

Ազգային Ժողովը կարող է զանազան ձեւերով «մասնակցիլ» ընտրութեան. բայց չի կրնար իւր մէջ բովանդակել բոլոր թեմերուն իրաւունքը՝ նոյն ընտրութեան մասնակցելու համար։ Ժամանակաւ, դիւրութեան համար այսպէս մտածուեր է։ Բայց հիմա կարեւոր է Եկեղեցւոյ լաւագոյն աւանդութեանց և ժամանակին գործնական պահանջմանց աւելի համաձայն եղանակ մը գտնել։ Հանրային զգացումն ի մեզ այսպիսի բարեփոխման մը լիովին պատրաստ կը գտնուի այժմ։

Մեր յարգոյ պաշտօնակցին եկեղեցասէր նկատումներն ու զգացումները գոհացնելու համար առ այժմ այսչափ ինչ յայտնաբարձէն յետոյ, կը շարունակենք իւր ողջամիտ գրուածը ծանօթացնել մեր ընթերցողաց։

Արշէշան բնաւ չի կրնար հանդուրժել որ նոր ընտրութիւնը դարձեալ 30-35 ձայնիւ կատարուի Կրօնական շարժառիթներէ մղեալ, հարկ անհրաժեշտ կը նկատէ որ 130-140 ձայներ անպատճառ մասնակցին այս աւագ դրժողութեան։ Այս նպատակաւ, խընդիրը կը քննէ երեք տեսակէտով.

Ա. Տեսակէտ. այսինքն՝ համաձայն ընտրական սկզբան ոգւոյն և կանոնաւոր դրժադրութիւն պահանջներուն։ Բ. Պարտական. այսինքն համաձայն մեր Եկեղեցւոյ աւանդական օրէնքին կամ իրաւունքին։ Գ. Դրժնական. այսինքն՝ թէ ինչ հետեւանք կարող է ունենալ Թուրքիոյ Հայոց նախկին ձեւով մասնակցութիւնը նոր ընտրութեան։ (*)

(*). Այս երրորդ խնդիրն ինքնայայտ է։ Եթէ Ազգ. Ժողովն այս անգամ ալ կրկնէ նախորդ «բանաձեւական» խաղերն, այն կարեւոր արդիւնքը ձեռք կը բերէ որ համազգային ընտրութեան մասնակցելու իրաւունքէն այս անգամ ևս կը զրկուի ազգային մեծամասնութիւնը։

(Մ. Խ. Աբէլեան)

Ընտրական սկզբունքը շատ հին է մարդկային ազգին մէջ։ Բայց առաջին գործադրութեան ժամանակներէն ի վեր շատ փոփոխութիւններ կրած է։ Սկզբեալ առաջին չքաւորներէն երբ խառնիճաղանճ եւ անկերպարան ամբոխը խառնաձայն աղաղակներով կը վճռէր այս կամ այն ընտրութիւն, մինչեւ մեր օրերու բարդ և կազմակերպուած ընտրութիւնները, կարելի է տասնեակ ձեւեր թուել։

Եկեղեցական ընտրութիւնը պէտք է զանազանել աշխարհական ընտրութիւններէն։ Աշխարհական ընտրութիւնք և ընտրեալք միշտ որոշ ժամանակի մը համար են, իսկ Հայրապետի ընտրութիւնը ցմահ է։ Աշխարհական ընտրութեանց մէջ միշտ յայտնի է թէ որոշ ժամանակ մը ետքը նոր ընտրութիւն պիտի լինի, և օրէնսդրին յայտնի են այն տարերքը որ պիտի մասնակցին նոր ընտրութեան։ Կաթողիկոսներու և առ հասարակ եկեղեցականներու ընտրութեան նկատմամբ երբեք յայտնի չէ թէ ե՛րբ պիտի լինի նոր ընտրութիւն, ուստի և ինչպիսի տարրեր պիտի մասնակցին։ Ուրեմն, այն անյայտ տարերքը հաղիւ թէ արտայայտեն իրենց ընտրողաց կամքն։ Այս իսկ պատճառաւ, քանի որ մեր եկեղեցական անցեալով անպարտ կ'ընդունինք թէ Հայրապետը ժողովրդի ընտրեալը պէտք է լինի, ընտրութեան պատգամաւորք միշտ պէտք է յատկապէս ընտրուին, երբ Աթոռը թափուր մնայ։ Այս կերպիւ միայն կարելի է պահպանել Հայրապետի ընտրութեան ժողովրդական համազգային հանդամանքը։

Խնդրոյն վերացական կողմին վրայ, մեր յարգոյ պաշտօնակից կը մոռնայ թէ նոր՝ իսկ աշխարհային ընտրութեանց պատմութիւնն իրեն իրաւունք կուտայ այսպէս մտածելու։ — Մինչեւ Նահանգաց մէջ, ամէն նահանգային խնդիրներ կ'որոշուին նահանգային խորհրդարանաց մէջ։ Ամէն համազգային խնդիրներ կ'որոշուին Ուսչինկիրի կեդրոնական խորհրդարանին մէջ։ Իսկ երբ կարգը կուգայ նախագահն ընտրելու, նահանգային խորհրդարաններն ալ, կեդրոնական խորհրդարանն ալ կը լռեն։ Ուղղապէս ժողովրդէն ընտրեալ պատգամաւորներ կը կատարեն նախագահին ընտրութիւնն։ Ուրեմն, ժողով մը, Ազգը ներկայացնելուն համար, անպատճառ ամէն տեսակ գործերու համար ընտրուած չի կրնար լինելու եւ որչափ ընդարձակ լինի մեր Ազգ. Ժողովոյ իրաւասութիւնը, կամ ողջիկոսի ընտրութիւնը գործնականապէս իւր մէջ կատարել լմննցնելու չափ ընդարձակ չի կրնար լինել։ Եւ՝ չ Ազգին, ո՛չ Եկեղեցւոյն շահերը կը պահանջեն այս ասոյթեան չափազանցել Սահմանադրութեան մէկ անմեղ բացատրութիւնն, և կապտել Հայ Եկեղեցւոյ հարազատ զաւակաց կրօնական մէկ մեծ իրաւունքն, որոյ կիրառութիւնն այնքան օգտակար կրնայ լինել բարոյական և հոգեկան այնքան տեսակէտներով։

Այս գաղափարք նոր չեն Աբէլեանին համար։ Վեց տարի յառաջ, Վեհ. Մակար Կաթողիկոսի հաստատման առթիւ, շարք մը պատմական յօդուածներու հրատարակմամբ, այս տողերու հեղինակն ըստ կարի ապացուցած էր համազգային ընտրութեան առաւելութիւններն։

Ի վերջոյ, Արշէշան կը բացատրէ ընտրական գործոնեան սրբազան կարեւորութիւնն. այսինքն՝ մէկ անգամ եւ մէ՛կ տեղ կատարուելու պէտքն. եւ մանաւանդ Հայրապետական ընտրութենէ մը անբաժան կրօնական արարողութեանց միահաղոյն մասնակցելու կարեւորութիւնն. օրինակի համար, պատգամաւորք մէկտեղ պէտք է գան երդում ընելու համար, և իրենց եկեղեցւոյ յատուկ արարողութեանց կատարմամբ մասնակցելու համար այս կրօնական գործողութեան։ Ցայս վայր Թուրքիոյ Հայոց հետեւած ընթացքն ընտրութիւնը զրկած էր իւր այս ամէն հոգեշահ հրապոյրներէն։

Արշէշան կը խոստանայ ուրիշ յօդուածներ ալ նուիրել այս խնդրոյ։ Բայց եթէ թուրքիոյ Հայերն համողելու համար է, կարծենք աւելորդ յօդուածներ է։ Դաղափարք բարեփոխուած են այժմ։ Կը մնայ իրագործել միայն։

ԵՊԻՍԿՈՊՈՍՈՒՆՔ ՄԱՅՐ-ԱԹՈՌՈՅ

Զ.

ՍԻՄԷՈՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԷՖԷՐԵԱՆ. Նիկոմիդիոյ վիճակի Կէյվէի Օրթաքէօյ գիւղէն, ծնեալ իբր 1830ին, և հաւանաբար 61 տարեկան։ Սուրբ Երուսաղէմայ Մխիթարեանց անդամ եղած է ի սկզբանէ, և ի նմին հուսկ յետոյ արեղայացած 1857ին. և վանուց մատակարարական գործառնութեանց մէջ նշանաւոր եղած, և այդ պատճառով պատրիարքական փոխանորդ անուանուած ի Կ. Պոլիս, և այդ պաշտօնով մեծապէս օգտակար եղած Միաբանութեան, որ իբր 27 տարիէ ի վեր անշարժ կը պահէ զնա այդ պաշտօնին մէջ։ Եպիսկոպոսութիւնն ստացաւ Դէորդ Կաթողիկոսէ, երբ յուղարկաւոր ընկերացաւ նմին ի Ս. Էջմիածին յամին 1867, և այսօր Դէորդ Կաթողիկոսէ ձեռնադրեալներուն երիցագոյնն է։ Պատրիարքարանի մօտ բնակելովն, և Կ. Պոլսոյ մէջ հաստատուն մնացող եպիսկոպոսներէն մին լինելովը, Սիմէոն Սրբազան չարունակաբար ազգային գործոց մասնակցած է, իբր երեսփոխան, իբր վարչական անդամ, իբր խորհրդոց անդամ և առնակատ, և այսպէս յառաջանալով հասած է Պատրիարքական Տեղապահութեան, զոր վարեց Յ. Յարութիւն Պատրիարքի հրաժարելէն յետոյ, մինչեւ այժմեան Պատրիարքի ընտրութիւնն և այդ առթիւ ստացաւ արքեպիսկոպոսութեան պատիւը։ Դաւառական պաշտօններէն ունի միայն Կիլիկիոյ քննչութիւնն, յորում նախագահեց այժմեան Տ. Մկրտիչ Կաթողիկոսի ընտրութեան։ Մատակարարական գործոց մէջ նշանաւոր յաջողակութիւնն իւր զօրաւորագոյն կողմն է։ Շատ խընդիրներ տեսած և մեծ փորձառութիւն ստացած է։

Է.

ԽՈՐԷՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԱՐ ՊԷՑ, ինչպէս տակաւին կը կոչուի սովորաբար, թէպէտ ի սկզբան ճանչցուած էր Գալֆայեան մականուամբ, և վերջին սկսած է գործածել Լուսինեան մականունը. Ծնած է Կ. Պոլսոյ Բերայի թաղն, և հռովմէադաւան ծնողաց զաւակ լինելով, այնպէս ալ մնած է, և Վենետկոյ Մխիթարեան Միաբանութեան աշակերտած, և ի նմին արհեստացած։ Ծնունդն եղած է իբր 1833ին, որով և մօտ 58 տարեկան է։ Հայաստանեայց Եկեղեցւոյ սպասաւորութեան մտնելն եղած է 1857ին, իսկ եպիսկոպոսական ձեռնադրութիւնն 1867ին։ Իւր մեծագոյն փայլն ստացած է ուսումնական և գրական ասպարէզին մէջ, յորում ծանօթ է քերթուածօք և թարգմանութեամբք։ Ունի եւ օրինական աշխատութիւններ որք ծանօթ և հրատարակեալ են։ Դատաբարակութեան համար ալ ժամանակին պաշտօնավարած է Մուրատեան, Հայկազեան և Խալիպեան վարժարանաց մէջ, նաև Պոլսոյ զանազան թաղական վարժարանաց մէջ։

Պատրիարքարանի ժողովականութեանց մէջ դտնուած է գրեթէ անընդհատ, 1860էն ի վեր, և ստէպ վարած է Կրօն։ Ժողովոյ ատենապետութիւնը։ Եկեղեցական պաշտօններու կարգէն ունի Բերայի և Պէշիքթաշի եկեղեցւոյ քարոզչութիւնն. և անդամ մը հոգեւոր այցելութիւն ի Ռումանիա։ Դաւառական վիճակներէ քանիցս ընտրուած է յառաջնորդութիւն, այլ ընդունած չէ՛։ Այդ պարագային արդելք եղած է իւր ձիրքերը սեփական ասպարէզի մէջ արտայայտելու, և մնացած է չարունակ կեդրոնական վարչութիւնը կազմող տարրերէ մին։ Այժմ ալ քարոզիչ է ի Պէշիքթաշ և հրաժարեալ Կրօն։ Ժողովոյ ատենապետն էր։ Քանիցս ընտրելի առաջարկուած է Պատրիարքութեան։

Ը.

ՍՏԵՓԱՆՆՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԱՆՏԱԼՃԵԱՆ. Ծնած է ի Պրուսա 1837ին, որով կը լինի 54 տարեկան։ Արեղայութեամբ Արմաշու միաբան կը համարուի. զի այդ անուամբ ձեռնադրութիւն առած է 1861ին Դէորդ Կաթողիկոսէ, նոյն ինքն ալ այն Միաբանութեան վրայ ձեռնադրուած էր։ Շարունակ նոյն Կաթողիկոսի ընկերակից եղած է, և ի միասին Էջմիածին դնացած և 1868ին եպիսկոպոս ձեռնադրուած է ի նմանէ, այլ ինչ ինչ խնդրոց պատճառաւ հեռացած անտի 1871ին, և ժամանակ մը ի Հռովմ ալ դնացած, և ի դարձին Կեսարիոյ վանքերը քաշուած, ուր կը մնայ տակաւին, իբր վանահայր Պէշիկեսի Ս. Դանիէլ վանուց։

Թ.

ԲԱՐԹՈՂԻՄԷՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԶԱՄԻՉԵԱՆ. Բնիկ Կ. Պոլսեցի իբր 56 տարեկան. Ձեռնասուն Տ. Գէորգ Կաթողիկոսի, և նոյն պատճառով Արմաշի Միաբանութեան անուամբ ձեռնադրուած։ Իւր փոքանորդ մնաց ի Պրուսա, երբ Տ. Դէորդ Կաթողիկոս մեկնեցաւ անտի Հայրապետական Աթոռը բազմելու 1866ին, և այն ժամանակէն մինչեւ հիմա կը վարէ Պրուսայի թիւրքախօս թեմին առաջնորդութիւնն։ Եպիսկոպոսական ձեռնադրութիւնն ստացաւ 1868 տարւոյն մէջ։ Բարթողիմէոս Սրբազանի ալ չեն պակսած առաջնորդական ինդիրներ, ինչպէս ամէն առաջնորդի. սակայն կը բացատրուի մեր պաշտամանի մէջ, որով և այսօր հնագոյն առաջնորդներէն մին է։ Վերջին ատենները ի Պոլիս եկած է առաջամեայ կերպով ի դարման առողջութեան, և արժանացած է Կայսերական շնորհիւ Հանդստեան Թոշակ ընդունիլ։

Ժ.

ՄԿՐՏԻՉ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԽՐԻՄԵԱՆ. Բնիկ Վանեցի, 1820 ին ծնած, և այսօր 71 տարեկան, արեղայ ձեռնադրուած Յաղթամարի Ծայլէ յեռոյ, յանուն Միաբանութեան Վարագայ։ Ցառաջ և յետոյ քան զձեռնադրութիւն աշխատած է վարժապետական և ազգային պաշտօններով ի Կոստանդնուպոլիս, ի Վան, և ի Կիլիկիա։ Յետոյ եղած է վանահայր Վարագայ, ապա վանահայր և առաջնորդ Մշոյ, մինչ 1869, երբ կոչուած է ի Պատրիարքութիւն Կոստանդնուպոլսոյ, իբր եպիսկոպոսական ձեռնադրութեան յաջորդ տարին։ Պատրիարքութենէն հրաժարեցաւ 1873 ին, եւ այնուհետեւ իւր կենաց մեծագոյն մասն անցուց Կ. Պոլիս ազգային պաշտօններով և մի մասն ալ ի Վան առաջնորդական և վանահայրական պաշտօններով. 1885 ին հարկ համարեցաւ դառնալ ի Կ. Պոլիս, ուստի անցեալ տարւոյ վերջերն ուղեւորեցաւ Յիւսիսային Ս. Տիղեաց, ուր կը մնայ տակաւին։ Ամէն. Խրիմեանի կեանքն յոյժ ծանօթ լինելով՝ աւելի մանրամասնութեանց չենք մտներ։ Վերջին կաթողիկոսական ընտրութեան ժամանակ նորա անունն ալ մտաւ պաշտօնական ընտրելեաց մէջ։ Ամէն. Խրիմեան պատուաւոր գիրք մը կը գրաւէ նաև ժամանակիս գրագիտաց մէջ, իւր բարոյախօսական և գրական հրատարակութիւններով։

ԺԱ.

ԳՐԻԳՈՐ ԵՊԻՍԿ. ԱԶԱՓԻՐԵԱՆ. Ծընեալ յԱժտարիան 1826 ին, և հետեւաբար 65 տարեկան։ Ադչակերտ Լազարեան ճեմարանին Մուսուրի և կայսերական Համալսարանին Տորբադի։ Կը մնայ Ս. Էջմիածնի Միաբանութեան մէջ, և նշանաւոր կը լինի ուսումնական և վարչական պաշտօններով. և եպիսկոպոս կը ձեռնադրուի 1872ին։ Վարած է ևս առաջնորդութիւն և սինոդականութիւն, այլ մարմնոյ տկարութիւնը դարմանելու նպատակով քանի տարիներէ հետէ քաշուած է Ադուլեաց Ս. Թովմա վանքն, որոյ վանահարութիւնը կը վարէ, և ժամանակը կ'անցուցնէ օգտակար և հոգեշահ թարգմանութիւններով։

—)(31)(—

ԹԵՐԹԻՆ ԱՐԵՒԵԼՔԻ

ԵՐԿՈՒ ԱՆՄԵՂՆԵՐ

ԺԻՒԼ ՄԱՌԻ

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ՍԵՓ ՁԱՍԲԱՅՆԵՐԷՆ

Տեսած էր այդ բանն եւ չարաշուք յիշատակ մը պահած էր անկից։

Տեսակ մը ընդերկրեայ խռռոչ էր այն, որ ժամանակաւ մառանի տեղ ծառայած էր և որ կը գտնուէր գործարանին հիւսիսային կողմը, անկեան մը մէջ ուր կը նետէին ամէն տեսակ աղտեղութիւններ։ Արեգակն երբէք մինչեւ հոն չէր թափանցած, և նոյն իսկ յուլիսի և օգոստոսի ամենէն տաք օրերուն մէջ, անոր չուրջը մշտնջենական խոնաւութիւն կը տիրէր։ Երեք կամ չորս աստիճաններէ կիջնուէր հոն։ Մառանը չորս մեթր երկայնութիւն և երեք մեթր լայնութիւն ունէր։ Պատին թանձրութեան մէջ փորուած քառակուսի ծակ մը տարտամ լոյս մը ներս կը թափանցէր, որ առաւօտէն մինչեւ իրիկուն, մինչ դուրս երկինքը պայծառ էր, մթնշաղի, գրեթէ մութի մէջ կը պահէր զայն։ Խորը հինգ կամ վեց տախտակներ զետեղուած էին չորս կողերի փայտերու վրայ։ Տախտակներուն վրայ դրուած էին եգիպտացորենի յարդէ շինուած պարզ խշտեակ մը։ Պզտիկ բանտարկեալն անկողնին էր այս՝ միակ և բարակ վերմակով մը։ Իրր սնունդ, տղան կոտոր մը չոր հաց կընդունէր իրիկունը երբ հոն կը մտնէր, հեծկլտանքներով և մղկաւանջներով գիշեր մը անցուցնելու համար։ Եւ առտուն, կը հանէին զայն անկից՝ գործարանները տանելու համար, ուր մինչեւներուն պէս տասներկու ժամ կ'աշխատէր։ Երբ տղան երրորդ կամ չորրորդ անգամ ըլլալով պատժուէր, Մապկյոն հաց չէր տար անոր։

Բանտը կը գտնուէր շտեմարաններուն տակ, ուր կը դիզէին գործարանի ձիերուն յատուկ խոտերն ու վարսակը։ Այս վերջինը այդ շտեմարաններուն մէջ մուկի անթիւ լեգէոններ կը ձգէր որք ինքնագլուխ կ'իշխէին հոն և կրծելով կրծելով վերջապէս պատին մէջ նրբուղիներ բացած էին որք բանտին կը յանգէին։

Ցաճախ, գիշերը հոն կ'իջնէին։ Պզտիկ բանտարկեալի մը ներկայութիւնը չէր ա հաբեկէր զիրենք և տղան երբեմն կ'արթընար—որովհետեւ սոսկումը տեղի կուտար յոգնութեան—մղեղ մարմիններու շփումէն, զգալի գգուանքներ որք կը սահէին ձեռաց և դէմքին վրայէն։

Այդ տեղ ահա փակած էին Շարլօն։

Բարեբախտաբար, մէկ օր տեւեց այս բնակութիւն։

Բայց պզտիկը բանտէն դուրս ելաւ սիրտը ոխով լեցուած Մապկյոյի դէմ, և ոչ նուազ ոխակալութեամբ Ժիւլիէնի դէմ։

Իրիկունը, երբ կրցաւ խոյս տալ—և ասոր համար պէտք էր խորամանկութիւն ի գործ դնել, հարկ էր վարպետին հսկողութենէն սպրդիլ և ցատքել պտի մը վրայէ որ կը շրջապատէր նոյն իսկ Մապկյոյի պարտէզն,— Պերթինի տունը վազեց։

Պզտիկին ոտքերը քիչ մը աւելի ազէկ էին։ Ա՛լ այնքան ցաւ չէր զգար։ Բայց սիրտն անհանգիստ էր իր Շարլոյ բարեկամին վրայ։

Շատ ուրախ եղաւ զայն տեսնելով։

Միանգամայն դող ելաւ։

—Շարլօ ըսաւ, աշակերտները դուրս չեն կրնար ելնել իրիկունը։ Ուրեմն հրամա՞ն առիր։

—Հրման չառի։ Զպիտի տային։

—Փախա՞ր։

—Այո, փախչիլը դժուար բան չէ, հոգ մըներ։ Այնպէս որ, որովհետեւ նընջարան ելած ատենիս մեզի չեն համրեր, ոչ ոք պտի նշմարէ իմ բացակայութիւնս... Ուստի ուզածիս չափ երկար ատեն կրնամ քովդ մնալ։

—Ձե՞ռ վախնար։

—Ո՛չ, ըսաւ պզտիկն անտարբերութեամբ։

Պերթին զայն դիտեց, աչքերներն լի սքանչացմամբ, զոր այս անվեհերութիւն կը ներշնչէր իրեն։

—Ցաւագարը քեզի հանդարտ թողո՞ւց այսօր։

—Այո, բայց սովորականէն բոլորովին տարբեր երեւոյթ մը ունի... Ժպտելով երեսս կը նայի... թէև ես լաւագոյն պտի մնար անտարակոյս։ Պերթին խորհուրդ համարէի որ չի ժպտեր։

Ժիւլիէն զանոնք մտիկ կ'ընէր։ Աչուքները Պերթինին վրայէն չէր դատեր։

—Բեզի խնամել կուգամ, ըսաւ Շարլօ, կը հաւանի՞ս։

—Կը հաւանիմ, քանի որ այդ բանը հաճոյք կը պատճառէ քեզ։

Վերցուց լաթերն որք կը ծածկէին Պերթինի պզտիկ ոտքերը, այն խեղճ ուռած ոտքերն որոց մորթը տեղ տեղ եղած էր։ Պերթինի ցոյց տուած շէյի մը իւղն այդ վէրքերուն վրայ քսեց, յետոյ, մայրական խնամքներով, կապերը վագկային վրայ դրաւ վերստին, ուժով կապելէ զգուշանալով։

Ա՛լ ուշադրութիւն չէին ընծայեր Ժիւլիէնի. սա դէպ ի դուռն ուղղուած, զայն հրած և դուրս ելած էր։ Անմիջապէս ընկնաւ վազել դէպ ի գործարան։

Ժամ մը վերջը միայն նշմարեցին անոր բացակայութիւնը, բայց հոգ չընին։

Մութին մէջ նստած կը մնային՝ իրարու ձեռքէ բռնած, սրտերնին իրարու յարեալ, թոյլ եւ երկչոտ սեղմամբ իրենց գորովը կը փոխանակէին. պէտք չունէին խօսելու, զիրար կը հասկնային։ Երկուքն ալ բարի, ուղղամիտ և զուարթ էին, եւ երկուքն ալ արդէն տարտամօրէն կը ըզգային թէ մեծ վիշտ պիտի կրեն, սատիկ յուսահատութիւն մը, եթէ կեանքը զիրենք բաժնէր և արգելուր որ չչարունակեն տղայական սիրոյ քաղցր վէմն որուն առաջին գլուխներն աւարտած էին։

Շարլօ մինչեւ յաջորդ օրն հոն պտիի մնար անտարակոյս։ Պերթին խորհուրդ տուաւ իրեն որ մեկնի։

—Զգէ որ քիչ մըն ալ քովդ մնամ, այսպէս չատ ազէկ եմ։

—Ես ալ, Շարլօ, ես ալ երջանիկ եմ քեզ քովս ունենալուս։ Կեանքիս մէջ ասկից լաւագոյն վայրկեաններ չեմ անցուցած։ Չեմ գիտեր թէ ինչո՞ւ։ Դուն գիտե՞ս, Շարլօ։

—Ոչ։ Բայց հաւատա, Պերթին, ինչ որ ալ ընեն այսուհետեւ, քեզ հետ ապրիլ կ'ուզեմ։ Նոյն իսկ եթէ Ֆրանսայի ծայրն ալ ղրկեն զիս, պիտի վերադառնամ եւ քեզի գտնեմ։

—Որպէս զի իրարմէ չի բաժնեն զմեզ, Շարլօս, պէտք է որ հնազանդինք Պ. Մապկյոյի, պէտք է որ ա՛լ պատերուն վրայէն չի ցատքես, ինչպէս ըրիր... պատիժէ զերծ մնալու և մեր ապրուստը ճարելու համար։

—Եւ երբ աւելի մեծնանք, Պերթին, մեզի իրարմէ չի բաժնելու համար՝ եթէ կուզես՝ ամուսնանանք և աւելի սիրենք զիրար։

Պերթին վշտակոծ կոյսի սիրուն գլուխը ծռեց Շարլոյի ուսին վրայ եւ առորոշ ժպտելով մը ըսաւ.

—Այո, Շարլօս, պիտի ամուսնանանք և իրարու մօտ մինչեւ երջանիկ պիտի ըլլանք։

Եւ քիչ մը սթափելով այդ սիրուն երաշէն։

—Կ'ապրիմ, Շարլօ, պէտք է որ մեկնիս։ Շատ կը վախնամ որ յանկարծ վրայ հասնին։

—Բանէ մը մի վախնար, բայց զքեզ հանդարտեցնելու համար կը դառնամ ահա։

Եւ արդարեւ վազն ի վազն առաւ քալեց։

—Սա Ժիւլիէնն ինչո՞ւ չի դառնար, մրմռաց Պերթին, որ նոր չարութեան մը նախազգացումէն կը դողդողար։

Մնաց որ, Պերթին չէր սխալեր։

Երբ Շարլօ ճամբուն վրայէն անցաւ՝ գործարան դառնալու չտապելով, իր ետեւի փոսէն ստուեր մը ելաւ և գիշերուան մութը ներծին չափ անոր ետեւէն նայեցաւ։

Ժիւլիէնն էր։ Պզտիկ տղան Սէն-Ռըմի դարձաւ, տուն մտաւ, իսօք մը չըրաւ և պառկեցաւ։

Մապկյոյի բանջարանոցը փեռեկեալ պատերով շրջապատուած է, որոց քայքայուած քարերն այնքան աստիճաններ կը ձեւացնեն որոցմէ դիւրաւ վեր կելնուի։

Պէտք էր պատին վրայէն պարտէզը ցատքել, անոր երկայնութեամբ անցնիլ. վարպետին տունը աջակողմ ձգելով, և միւս ծայրը բաւական բարձր խրամատ մը հանիլ և անկից գործարանին ներսիդին մտնել։

Դիւրին գործ մըն էր այս, վասն զի Շարլօ կատուի պէս ճաղուել էր։

Նախ այս ամենը կատարուեցաւ առանց դէպ։

(Շարունակելի)

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ԱՅՍ ԱՒՈՒՐ ՍՈՒՐՀԱՆԴԱԿԱՆ

ԱՆԳԼԻԱ ԵՒ ԳԵՐՄԱՆԻԱ

Վիլհելմ Կայսր կը խորհի անգլ. նաւատորմն հրաւիրել որ գերմանական մի քանի նաւահանգիստներու այցելէ. Շքեղ հանդէսներ պիտի լինին այս առթիւ, և բարեկամական ցոյցեր ի պատիւ անգլ. սպայից. Բիլ պիտի լինի կեդրոն այս ընդունելութեան. Կայսրն անգլ. նաւատորմին բարձրագոյն սպաներն հացկերոյթի պիտի հրաւիրէ Փոցտամի պալատան մէջ.

ԱՐՄՏԵԱՑ ԽՆԴԻՐ

Պերլինէ կը հեռագրուի թէ հաճարի և ցորենի գիներն որք հաստատ կը բռնուէին քանի օրէ ի վեր, անկում կրեցին. Գեանախնձորի գինը վրայ պիտի դնէ. զի անցեալ ամսուան շարունակ տեղացած անձրեւներուն բերմամբ, գետնախնձորի շատ մը արտեր խանդարուած են. Բրուսիոյ երկրագործական նախարարն երկրագործական ընկերութիւններէն խնդրեց որ իրեն հաղորդեն հնձոց արդիւնքը. Կ'ուզէ հաճարի հնձոց արդիւնքն իմանալ սեպտեմբերը 1էն յառաջ, ցորենի՝ սեպտ. 3էն յառաջ և գետնախնձորի արդիւնքը՝ սեպտ. 20էն յառաջ.

ՄՆԱՆԿՈՒԹԻՒՆ Ի ԹՐԻԼՍԴԼ

Քրէտիդ Անդրատ դրամատան Թրիէսդէի մասնաճիւղը ծանոյց թէ սովորական տոկոսով պիտի վճարէ մնանկացեալ Մարբուրկօ և Փարէնդէ տան բոլոր փոխանակագրերը.

ՄԱՄԼՈՑ ԴԱՏ Ի ՀՆԴԿԱՍՏԱՆ

Հնդկերէն Պանչոպտէ լրագրին դէմ անգլեհնդկի կառավարութեան բացած դատն յաջող ելք չունեցաւ. զի ինն երդուելոց 7ը լրագրին դէմ և երկուքը լրագրին ի նպաստ որոշում տուին, մինչ համամտութիւն հարկաւոր է ըստ անգ. օրինաց՝ ամբաստանեալը դատապարտելու համար. Այս արդիւնքն իմանալով, Հընդիկներն որք մեծ բաղձութեամբ եկած էին Կալկաթայի դատարանը, մեծապէս բերկրեցան եւ ծափահարեցին. Դատը վերստին պիտի սկսի և տեսնուի դեկտեմբեր ամսուն մէջ.

ՊԱՏԱՐԱԳԱՄԱՏՈՅՑ ԲԱՀԱՆԱՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԵՋ ՄԵՌԵԱԼ

Ի Փալերմօ (Իտալիա) անօրինակ դէպք մը տեղի ունեցաւ. Մածծարինօ կոմսուհւոյն խոստովանահայր Տոն Ճիւսէփէ ԼաՌօզա քահանայն օգոստ. 23ին Մածծարինօ ամբարոնցին մատրան մէջ պատարագել սկսաւ. քաջառողջ. Երբ կէս եղաւ պաշտօնը, քահանայն յանկարծ ինկաւ, և սաստիկ շարշարանօք հոգին աւանդեց. Թունաւորած էր ուտիճով (sublimé corrosif), որ էր Ս. Հաղորդութեան գինւոյն կամ ջուրին մէջ.

ԻՌԼԱՆՏԱԿԱՆ ԽՆԴԻՐ

Կը յիշուի թէ պահպանողական կառավարութիւնն Հողային Ցանցնաժողով մը կազմած է Իռլանտա, փոքր երկրագործներուն դրամ փոխ տալու համար, որ իրենց մշակած հողերը գընեն հողատէրներէն, որով հողատէր լինին, փոխարէնը քիչ քիչ հատուցանելով կառավարութեան. Արդ, Ցանձնաժողովն այս օրերս ծանոյց թէ արդէն 10 միլիոն անգլ. ոսկւոյ քանակութեամբ գումար փոխ խնդրուած լինելով իրմէ, օրինօք նախատեսեալ գումարն սպառած է, և նոր խնդիր չի կրնար ընդունիլ, մինչեւ որ փոխ առնուած գումարք հատուցուին. Որովհետեւ դեռ շատեր դրամ պիտի խնդրէին, այս ծանուցումն մեծ յուսաբեկութիւն պատճառեր է իռլանտացի վարձակալ հողագործներու մէջ.

Պ. ԿԻՐՍ ԵՒ Պ. ՄՕՐԼԻՆՀԱՅՄ

Փեթերսպուրկէ կը հերքուի այն զրոյց թէ Պ. Մօրլինհայմ, ֆրանքեւռուս նիզակակցութեան պաշտպանը, պիտի անուանի արտաքին գործոց նախարար փոխանակ Պ. Կիրսի. Սա կը շարունակէ իւր պաշտօն, և Պ. Մօրլինհայմ վերադարձաւ իւր Փարիզեան դեսպանութեան.

ԹՈՒՆՈՒԶ

Տարւոյս առաջին եռամսեայն, Թունուզ դուրսէն ապրանք գնեց սովորականէն չորս միլիոն զրուշ աւելի, — մեծաւ մասամբ տպածոյք. Իւր արտածմունք աւելցան վեց միլիոն զրուշէ աւելի, — մեծաւ մասամբ ցորեն, ձէթ, արմաւ, նարինջ և լիմոն. Թունուզի վաճառականութեան մեծագոյն մասն է Ֆրանսայի հետ. Բայց Մալթէզք, Անգլիացիք, Իտալացիք և Աւստրիացիք եւս մասն ունին.

ԱՆԳԼԻԱ ԵՒ ՖՐԱՆՍԱ

Աւսթիկ Վիքթորիա Թագուհւոյն կողմէ առ Պ. Բաւնս ուղղեալ հեռագիրը.

«Կը փափաքիմ յայտնել Ձեզ այն մեծ հաճոյքը զոր զգացի՝ ընդունելով գծուկալ ժէրվէ և իւր սպայներ յՕպորն, և աքանչացումն որով դիտեցի Ֆրանսական նաւախումբը, զոր այս վայրկենիս աչքէ անցուցի.» ՎԻԿԹՈՐԻԱ.

Աւսթիկ Պ. Բաւնոյի պատասխանը.

«Կ'աղաչեմ զՁեր Վեհափառութիւն ընդունել իմ անկեղծ շնորհակալիքս այն շնորհալի ընդունելութեան համար զոր հաճեցաւ ընծայել ժէրվէ ծովակալին և իւր սպայից, ինչպէս եւ այն զգացմանց համար զոր կ'արտայայտէ ինձ՝ Ֆրանսական նաւախմբին նկատմամբ.» ՔԱՒՆՕ

Դիտելի է զի Թագուհին կը յայտնէ իւր զգացած «հաճոյքն» և «սքանչացումը». Զարին և Պ. Բաւնոյի միջեւ փոխանակեալ հեռագրովք կը լինէին «խորին համակրութիւնք որք կը միացնեն զՖրանսա և զՌուսիա»: Հո՛ս է բոլոր տարբերութիւնը, կ'ըսեն Ֆրանսական թերթք սանք.

—Ռէպիւպլիք Ֆրանսէզ Վիքթորիա թագուհին գովաբանող խմբագրականի մը մէջ գիտել կուտայ թէ Ֆրանսասէր ցոյցերու առաջին նշանը Ն. Վեհափառութիւնն ինք տուաւ, իւր ծերութեան մէջ զոհելով իւր հանդիստ, անպատասխանով մը ծովային պտոյտ մը կատարելով, և նախագահելով կարգ մը պաշտօնական ընդունելութեանց.

ՎԻԼՀԵԼՄ ԿԱՅՍՐ

Սաքսոնիոյ Մէրսպուրկ նահանգին գլխաւոր քաղաքին մէջ Վիլհելմ Կայսեր ըրած բանախօսութեան մասնաւոր կարեւորութիւն մը կը տրուի. Կայսրն, որուն հետ էր Կայսրուհին, նահանգին բնակչաց շնորհակալութիւն յայտնեց իրեն եղած սիրալիր ընդունելութեան համար. Բաւ թէ իրենց երկիրը, Սաքսոնիա, բարձր դիրք մը կը գրաւէ արհեստագործութեան և երկրագործութեան մէջ. «Կը յուսամ որ վեհապետութեան և նահանգին փոխադարձ վստահութեամբ, գիւղացիներու դասը պիտի շարունակէ բարգաւաճիլ, և պիտի յաղթանակէ ամէն դժուարութիւններն. Իբրեւ քրիստոնեայ, անոնք պէտք է հանդուրժեն այն փորձութեանց զորս Երկինք կը ղրկէ.» Ցորնի սղելուն այս կերպիւ որոշապէս ակնարկելէն ետքը, Կայսրն յարեց.

«Ամենս ալ խաղաղութիւն կ'ըզձանք և կը յուսանք. եթէ երբեք պատերազմ ծագի, յանցանքը մերը չէ. Այս յուսով, բաժակս կը պարպեմ նահանգիս զարգացման. Տայ Երկինք որ ճի և բարգաւաճի.»

Կայսերը այս խօսքեր, որք անքան ապահովիչ չեն, Դերմանիոյ մէջ անընդհատ տպաւորութիւն ըրեր են. Լրագրերք ուսանք կ'ըսեն թէ Կայսրն ինք քաղաքական կացութիւնը պայծառ և ապահովիչ չի տեսներ.

ՖՐԱՆՍԱ ԵՒ ՌՈՒՍԻԱ

Այս երկիւղները կ'արտայայտէ Նուշեմպէ Լայիոնէզ կարեւոր դերման թերթն ալ, որուն կը դրուի Փարիզ.

«Ռուսիոյ և Ֆրանսայի միջեւ ցարդ ճշմարիտ նիզակակցութեան դաշնագիր չկայ, երկուց Տէրութեանց պետերուն կամ լիազօրներուն կողմէ ստորագրեալ. Բայց պաշտօնագրերու փոխանակութիւն մ'եղած է անշուշտ, որով հաստատուած է երկուց Տէրութեանց համամտութիւնը քաղաքական արդի պայմանաց հանդէպ, և Երրեակ Նիզակակցութեամբ վրդովեալ Ներդաշնակութիւնն համընթաց գործողութեամբ վերահաստատելու միտքն որոշումը, որով Ֆրանսա և Ռուսիա խօսք մէկ պիտի ընեն ամէն պատահականութեան մէջ. Քրոնշդատ յայտնի այցելութենէն ետքն, հանրային կարծիքը կը պահանջէ նիզակակցութեան մը վերջնական կնքումը.

ԴԱՆԻԱ ԵՒ ՌՈՒՍԻԱ

Զարին և Զարուհւոյն այս տարւոյ այցն ի Դանիա սովորականէն տարբեր նշանակութիւն մը կ'առնու. Կ'երեւի թէ Դանիա պատերազմ մը հաւանական կը համարի, և ամսոյս 4/16 ին պատերազմական նախարարը խօսելով ի Սվեէնսպորկ, Բոռիէնկէի (Դանիոյ մայրաքաղաքին) ամրութեանց վրայ, ըսաւ. «Այս ամրութեանց նպատակն է զՊոռիէնկէ զերծ կացուցանել յանկարծակի յարձակմամբ գրաւումէ, և պատերազմն երկարել, մինչեւ որ գրաւնուին բարեկամ Տէրութիւններ որք չահ ունին Դանիոյ պահպանման մէջ.»

—Էնդէֆոնդոս Պլէ կը գրէ թէ «Զարը վերջնապէս չպիտի ստորագրէ Ֆրանսայի հետ նիզակակցութիւնը, մինչեւ որ՝ իւր տարեկան այցելութեան առթիւ ի Բոմիէնկա՝ խորհուրդ հարցունէ իւր զրքանչին, (Դանիոյ Թագուհւոյն,) որոյ քաղաքական ողջմտութիւնն ու փորձառութիւնը մեծապէս կը գնահատէ.»

Ա Զ Գ

Ազգ. Կեդրոնական Վարչարան

Ցառաջիկայ 1891—1892 տարեշրջանի մտից քննութիւնք տեղի պիտի ունենան ներկայ օգոստոս ամսոյ 20 և 21ին. Ներկայանալ փափագողք կը նշանեն ամէն օր դիմել ի Կեդրոնական Վարչարան և, անուններն արձանագրել տալով, հարկ եղած տեղեկութիւններն առնել.

ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹԻՒՆ

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

ՆՈՐ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Աւսթիկ Ազգ. Կեդր. Վարչութեան կրօն. և Քաղ. ժողովոց տնդամոց անուանքն՝ ըստ վաւերացման Բ. Դրան.

Կրօնական Ժողով

Տ. Գրիգորիս	Արքեպ. Յովհաննէսեան
» Գէորգ	Ծ. Վ. Իւթիւճեան
» Գարեգին	» Թաթարեան
» Գաբրիէլ	» Ձէվահիրճեան
» Մովսէս	» Կէօմրիւկճեան
» Յովհաննէս	Ա. Ք. Հիւնքեարպէյենտի
» Միքայէլ	» Վարժապետեան
» Արիստակէս	քհնյ. Ճիզմէճեան
» Խաչատուր	» Գաբրիէլեան
» Յովհաննէս	» Շահպազեան
» Վահան	» Գրիգորեան
» Գաբրիէլ	» Խանճեան

Քաղաքական Ժողով

Սիմոն	պէյ Մաքսուտ
Տիգրան	էֆ. Եուսուֆեան
Յովհաննէս	» Թորոսեան
Յովհաննէս	» Ազնաւոր
Համազասպ	» Պալլարեան
Էլիաս	» Զայեան
Գրիգոր	» Խրտրեան
Տիգրան	» Կիւմիւշկիրտան
Միհրան	» Սէթեան
Ստեփան	փաշա Ասլանեան
Տիգրան	էֆ. Բաղդասեան
Մկրտիչ	» Ասասեան
Ռէթէոս	» Պէրվանեան

Հետեւաբար, կրօնական ժողովն երկու եպիսկոպոսներ կը պակսին, իսկ Քաղաքական Ժողովէն մէկ անդամ՝ հրաժարեալ Վսեմ. Գաբրիէլ Լիւլէճեանի նորատունկեան, որոց տեղ նոր ընտրութիւն կատարել հարկ պիտի ըլլայ.

Ամեն. Ս. Պատրիարք Հայրն՝ անձնական տկարութեան պատճառաւ՝ երէկ դարձեալ իւր բնակարանը մնաց ի Մաքրիգիւղ.

ԱԶԳԱՅԻՆ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Ցառաջիկայ երկուշաբթի օր, 19 օգոստոս, Դեր. Տ. Գարեգին եպիսկոպոս Սըրուանձտեանց, Զաթալ խանի կօշկակար արհեստաւորաց ննջեցեալց հոգւոյն համար հանդիսաւոր Ս. Պատարագ պիտի մատուցանէ Ս. Փրկչի եկեղեցւոյ մէջ.

Զայս ի գիտութիւն համայն բարեպաշտ ժողովրդեան ծանուցանելով,

Մնամք յարգանօք

Ի դիմաց Հոգաբարձ. Ազգ. Հիւանդանոցի

ՊԱՏՐԻԿ ԿԻՒԼՊԷՆԿԵԱՆ

Մաքրիգիւղէն հետեւալը կը հաղորդեն մեզ

Մաքրիգիւղի նորակառոյց վարժարանին տարիներէ հետէ կիսատ մնացած վիճակն կարի տխուր տպաւորութիւն մը կը գործէր ամէն զգայուն սրտերու վրայ և ազգային արժանապատուութեան խնդիր մը կը դառնար գիւղին օտար հասարակութեանց առջեւ, որոց իւրաքանչիւրը կը պարծի իւր հոյակապ հանրային շէնքերովք. Պատ. թաղ. խորհուրդն իրեն նուիրական պարտականութիւն համարելով վարժարանին շինութիւնն ի գլուխ հանել՝ բարեբեր ազգայնոց մէջ հանգանակութեան ձեռնարկած, եւ միանգամայն, մասնախմբի մը ակնկալութեամբ թատերական շքեղ ներկայացում մը կազմակերպած է, որ տեղի պիտի ունենայ օգոստոս 24ի շաբաթ գիշերը. Թաղական Խորհրդոյ նպատակն ըստ ինքեան այնչափ վսեմ է, որ ամէն գիւղացւոյ պարտականութիւնն է նորա ձեռնարկին յաջողութեանը իւրովսանն սատարել. քաղցր է մեզ ուրեմն յուսալ թէ, Մաքրիգիւղի պատուարժան ազգայինք, ըստ իւրեանց բարի սովորութեան, այս անգամ եւս պիտի բարեհաճին, ամէն երկրորդական նկատում ջնջելով, նիւթապէս ու բարոյապէս քաջալերել Թաղ. Խորհրդոյ սրտէն եւ մասնախմբի աշխատութիւններն եւ այսու փայլուն ապացոյց մը տալ իրենց կրթասիրութեան.

Հոգիէն կիսանայ թէ ամբաստանիչ տեսանն իրրեւ ոճրագործ ամբաստանած է ժամկոչ Խաչին իբրեւ հեղինակ Պէյքօղլի եկեղեցիին կատարուած գողութեան և թէ գրութիւնք յանձնուած են եղեռնագատ տանին որ ի մտոյ այդ դատով պիտի զբաղի.

ՕՀԱՆՆԷՍ Էֆ. Ճ. ՕՀԱՆԱՍԱՓԵԱՆ

Ցետ կարճատեւ հիւանդութեան փոխեցաւ առ Աստուած ի հասակի 32 ամաց երիտասարդութեան, ի սուգ և ի վիշտ իւր սիրելի ամուսնոյն և դեռատի դստրիկին, և իւր մօրն և քրոջն և եղբօրն և համայն ազգականաց եւ բարեկամաց.

Ցուղարկաւորութեան տխուր հանդէսը պիտի կատարուի վաղը կիրակի ժամը 6½ին ի Ս. Թադեւոս եկեղեցւոյ Գատրգիւղի, ուստից պիտի փոխադրուի յԱզգային գերեզմանատունն Պալըգլը, իւր Նախնեաց դամբարանն.

17/29 օգոստ. 1891

Կամուրջէն ժամը 6ին շոգենաւը կը մեկնի Գատրգիւղի համար.

Երէկ Օրթագիւղի մէջ կատարուեցաւ Ցարութիւն աղա Արապեանի յուղարկաւորութիւնը. Հանդուցեալն յետին շառաւիղն էր Արապեան ընտանեաց, որք ծանօթ են իրր ձուլիչ և տր պագրիչ և յանցելումն բաւական տարիներ տպարան ունեցած են յՕրթագիւղ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԵՐԵԿԻ ՍԼԱՄԼԸՔԸ

Սէլամլըքի արարողութիւնը տեղի ունեցաւ երէկ ի նշան Թաշ Թէչվիզիյէ մզկիթին մէջ. Մէջլիսէն Վեհ. Սուլթանը հանդիսաւոր կերպիւ այդ մզկիթը գնաց եւ կատարեց ուրբաթու աղօթքը.

Ն. Կ. Վեհափառութիւն մզկիթէն ելնելով կայս. պալատ դառնալու պահուն, Բարձր. Մայր Թագուհւոյն ապարանքը գնաց ի նշան Թաշ և ժամ 8ին կայս. պալատ վերադարձաւ.

* * *

Սէլամլըքի հանդէսը դիտելու համար հիւրանոցին մէջ կը գտնուէին աւստրիական դեսպանատան պակաշտօնական հրամանատարն՝ ընկերակցութեամբ Աւստրիոյ Կայսեր սենեկապահներէ միոյն, ֆրանսական դեսպանատան զինուորական կցորդը, Քամբոնէվէնէը փաշայի կինը, Պոլսոյ քարտիզոց արտօնատէր Միշել փաշա և վաթսունէ աւելի օտարազգի զբօսաշրջիկներ. Ներկայից ոմանք սենեկապետաց մէջոցաւ արժանացան կայս. մեծարանաց.

ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ՏԵՂԱՊԱՀԻ ՕՈՒՆԱՑ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ

Օունաց Պատրիարքարանի Սինոդը և Խառն ժողովը երէկ համագումար նիստ ըրին Պատրիարքական Տեղապահի ընտրութեան համար.

Նախ ընտրուեցաւ Դեր. Գերմանոս, Հէրակլէի Մետրապոլիտը, բայց սա հրաժարելով, երկրորդ ընտրութեան ձեռնարկուեցաւ և այս անգամ քըուէից մեծամասնութիւնը տրուեցաւ Պերաթի (Եանեա) մետրապոլիտ Դեր. Տրոմէէն. Այս ընտրութիւնը անմիջապէս մատուցուեցաւ կայս. կառավարութեան հաւանութեան.

Սինոդն եւ Խառն ժողովն որոշեցին շնորհակալութեան ուղերձ մը ուղղել ի կայս. պալատ այն հայրական հոգածութեան համար, զոր Վեհ. Սուլթանն հաճեցաւ ցոյց տալ Դիոնեսիոս Ե.ի հիւանդութեան և մահուան պարագայից մէջ.

ՅԱՒԱԿՅԱՆ ՀԵՌԱԳԻՐՔ

Աւսթիկ Օունաստանի դահաժառանգ իշխանին կողմէ Ֆէնէրի Պատրիարքարանին ուղղուած ցաւակցական հեռագիրը

Առ Փէնանդրոն Տէրեղերական Պարիարքէն

ԱԹԷՆՔ, 25 օգոստ.

Մեծ ցաւով իմացանք Ն. Ս. Տիեզերական Պատրիարքի վախճանման լուրն. ի բոլոր սրտէ կը մասնակցինք այն խորին վշտին զոր Եկեղեցին կ'զգայ այնքան չքնաղ ձիրքերով և առաքինութեամբք օժտեալ Պետի մը կորստեանն համար.

ԿՈՆՍԹԱՆԹԻՆ

Սինոդն հետեւեալ հեռագրաւ պատասխանած է.

Բարձր իշխան Կոնսթանթին Սբարդայի Դուքս, խնամակալ Օունաստանի

ԱԹԷՆՔ

Մեծ եկեղեցին կարի յուզուած է այն համակիր զգացումներէն, զորս Ձեր Արքայական Բարձրութիւն հաճած է արտայայտել իր Պետին կորստեանն առթիւ. Ի դիմաց Սինոդի կը փութամ ազաչել զՁեր Արքայական Բարձրութիւն, որ բարեհաճի ընդունիլ իր ջերմագին շնորհակալեաց հաւատին.

Երէյէմ Մեթրոպոլիտ

ԿԵՐՄԱՆՈՍ

* * *

Օունաց Նախկին Պատրիարքն, Յովակիմ Գ. որ այս պահուս Ամիսորոզի վանքը կը գտնուի, հեռագիր մը ուղղելով հանգուցեալին եղբօրորդւոյն, խորին ցաւակցութիւնն յայտնած է.

ՆԱՄԱԿ ԱՌ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵԼՏԻ-ԳՈՒՎԼԷ, 15 օգոստ.

Ձեր պատուական օրագրերի մէջ ընթերցայ թէ երբ Ապդ. Ժողովոյ մէջ խօսք է եղեր թէ կրօնային հանդէսի մը խմբագրութիւնն Առակախօսի մը մնացեր է, յայնժամ, երեւոյթանք ի լուր այս անուան յիշատակութեան, ծիծաղեր են. Այդ Առակախօսն, ինչպէս յայտ է, ես եմ.

Եթէ այդ երեւոյթանք գտնեն ինձ պէս եկեղեցական մը, որ կարող ըլլայ այդպիսի թերթի մը հրատարակութեան, առանց ո և է օգնականութեան և նպաստի, և ունենայ չորս հազարի չափ բաժանորդ, արդա՛ր ուրեմն իրենց այդ ծիծաղ, իսկ եթէ ոչ՝ ես ալ կուլամ այդ ծիծաղներուն վրայ.

Մնամ աղօթարար

ՎԱՀԱՆ Վ. ՏԷՐ ՄԻՆԱՍԵԱՆ

«ԱՐԵՒԵԼՔ» չի հրատարակուիր յառաջիկայ երկուշաբթի Ս. Աստուածածնայ տօնին առթիւ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԵՐԵԿԻ ՍԼԱՄԼԸՔԸ

Սէլամլըքի արարողութիւնը տեղի ունեցաւ երէկ ի նշան Թաշ Թէչվիզիյէ մզկիթին մէջ. Մէջլիսէն Վեհ. Սուլթանը հանդիսաւոր կերպիւ այդ մզկիթը գնաց եւ կատարեց ուրբաթու աղօթքը.

Ն. Կ. Վեհափառութիւն մզկիթէն ելնելով կայս. պալատ դառնալու պահուն, Բարձր. Մայր Թագուհւոյն ապարանքը գնաց ի նշան Թաշ և ժամ 8ին կայս. պալատ վերադարձաւ.

* * *

Սէլամլըքի հանդէսը դիտելու համար հիւրանոցին մէջ կը գտնուէին աւստրիական դեսպանատան պակաշտօնական դեսպանատան զինուորական կցորդը, Քամբոնէվէնէը փաշայի կինը, Պոլսոյ քարտիզոց արտօնատէր Միշել փաշա և վաթսունէ աւելի օտարազգի զբօսաշրջիկներ. Ներկայից ոմանք սենեկապետաց մէջոցաւ արժանացան կայս. մեծարանաց.

ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ՏԵՂԱՊԱՀԻ ՕՈՒՆԱՑ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ

Օունաց Պատրիարքարանի Սինոդը և Խառն ժողովը երէկ համագումար նիստ ըրին Պատրիարքական Տեղապահի ընտրութեան համար.

Նախ ընտրուեցաւ Դեր. Գերմանոս, Հէրակլէի Մետրապոլիտը, բայց սա հրաժարելով, երկրորդ ընտրութեան ձեռնարկուեցաւ և այս անգամ քըուէից մեծամասնութիւնը տրուեցաւ Պերաթի (Եանեա) մետրապոլիտ Դեր. Տրոմէէն. Այս ընտրութիւնը անմիջապէս մատուցուեցաւ կայս. կառավարութեան հաւանութեան.

Սինոդն եւ Խառն ժողովն որոշեցին շնորհակալութեան ուղերձ մը ուղղել ի կայս. պալատ այն հայրական հոգածութեան համար, զոր Վեհ. Սուլթանն հաճեցաւ ցոյց տալ Դիոնեսիոս Ե.ի հիւանդութեան և մահուան պարագայից մէջ.

ՅԱՒԱԿՅԱՆ ՀԵՌԱԳԻՐՔ

Աւսթիկ Օունաստանի դահաժառանգ իշխանին կողմէ Ֆէնէրի Պատրիարքարանին ուղղուած ցաւակցական հեռագիրը

Առ Փէնանդրոն Տէրեղերական Պարիարքէն

ԱԹԷՆՔ, 25 օգոստ.

Մեծ ցաւով իմացանք Ն. Ս. Տիեզերական Պատրիարքի վախճանման լուրն. ի բոլոր սրտէ կը մասնակցինք այն խորին վշտին զոր Եկեղեցին կ'զգայ այնքան չքնաղ ձիրքերով և առաքինութեամբք օժտեալ Պետի մը կորստեանն համար.

ԿՈՆՍԹԱՆԹԻՆ

Սինոդն հետեւեալ հեռագրաւ պատասխանած է.

Բարձր իշխան Կոնսթանթին Սբարդայի Դուքս, խնամակալ Օունաստանի

ԱԹԷՆՔ

Մեծ եկեղեցին կարի յուզուած է այն համակիր զգացումներէն, զորս Ձեր Արքայական Բարձրութիւն հաճած է արտայայտել իր Պետին կորստեանն առթիւ. Ի դիմաց Սինոդի կը փութամ ազաչել զՁեր Արքայական Բարձրութիւն, որ բարեհաճի ընդունիլ իր ջերմագին շնորհակալեաց հաւատին.

Երէյէմ Մեթրոպոլիտ

ԿԵՐՄԱՆՈՍ

* * *

Օունաց Նախկին Պատրիարքն, Յովակիմ Գ. որ այս պահուս Ամիսորոզի վանքը կը գտնուի, հեռագիր մը ուղղելով հանգուցեալին եղբօրորդւոյն, խորին ցաւակցութիւնն յայտնած է.

ՍԵՐՊԻՈՅ ԹԱԳԱՒՈՐԸ

Սերպիոյ լրագիրք կը հաստատեն այն լուրը թէ Սերպիոյ Ալէքսանդր թագաւորը Կ. Պոլիս պիտի գայ.

ԿՐԷՏԷ

Կրէտէի կուսակալութիւնը՝ նկատելով որ ժամանակէ մը ի վեր կղզւոյն մէջ պատահած մարդասպանութեան և այլ դէպքերու շարունակելուն գլխաւոր պատճառը՝ մէկ քանի գիւղախումբերու միւսիրներուն իրենց պաշտօնի կիրառման մէջ թերանալն է, շրջաբերական մը զրկելով ամէն կողմ ծանուցած է թէ յետ այսորիկ ո՛ր գիւղախումբին մէջ որ այդ կարգի դէպք մը պատահի, միւսիրները պարտին ամէն ջանք ի գործ դնել ոճրագործները ձերբակալելու համար և թէ հակառակ պարագայի մէջ՝ միւսիրք հարցաքննութեան պիտի ենթարկուին և օրինաց տրամադրութիւնն իրենց նկատմամբ ի գործ պիտի դրուի.

Կրէտէի պաշտօնական լրագիրը կը հերքէ այն զրոյցը թէ Բէթիմօի գաւառին մէջ իսլամ աւազակաց խումբեր երեւան եկած ըլլան և ի հատատութիւն իւր հերքման՝ կը հրատարակէ նոյն գաւառի կառավարչին ու շրջակայ գաւառակաց գայմագամներուն կողմէ կուսակալութեան ուղղեալ պաշտօնագրերն, որք կը յայտարարեն թէ իսլամ աւազակներու խումբեր ըբնաւ տեսնուած չեն.

ՊՈԼՍՈՅ ՔԱՐՏԱՓՈՒՆՔ

Առեւտրական եւ հանրօգուտ շինութեանց նախարարութեան տեղեկագրուած է թէ Պոլսոյ քարտիզոց շինութիւնք պիտի սկսուին համաձայն պատրաստուած քարտէսին, եւ պայմանագրոյ ու յանձնառագրոյ մէջ նշանակեալ պայմանաժամուն մէջ. Նոյն նախարարութիւնն եւս հաղորդած է զայս Ծովային նախարարութեան.

—Միշել փաշայի փոխանորդ Պ. Կրանէ երէկ Մարսիլիայէն մայրաքաղաքս ժամանեց.

ՕՍՄ. ՊԱՐՏԱՏՈՄՈՒ

Նախարարաց Խորհուրդն իւր կիրակի օրուան նստին մէջ քննած է այն ծրագիրը զոր մատուցած էր Պ. Բայլարտ և որ կը վերաբերէր մաքսային տուրքերով եբաշխաւորեալ օսմանեան պարտատոմսից միացման, սակայն ո և է որոշում չէ առած.

ԴԱՐԵՋՈՒՐԻ ԳՈՐԾԱՐԱՆ Ի ՍԼԱՆԻԿ

Առեւտրական եւ հանրօգուտ շինութեանց նախարարութիւնն, ըստ տեղեկագրութեան Սէլանիկի կուսակալութեան, արտօնած է Այաթէկի Եղբայրք վաճառականներ՝ զարիզուրի շոգեշարժ գործարան մը հաստատել Վարտար Բաբուի գուրսը, Հանրային Պարտիզին մօտ, իրենց սեպհական գետնին վրայ. Հարկ եղած գործողութիւնք կատարուելու վրայ են այդ հաստատութեան յատուկ ելրպալէ բերուելիք գործիներն ու այլ դոյզիքը մաքսատուրքէ ազատ կացուցանելու համար. Գործարանին կառուցման համար հարիւր հազար ոսկւոյ չափ ծախք հաշուած է և կրնուի թէ անանուն ընկերութիւն մը պիտի կազմուի.

ԹՂԹԱՏԱՐԱԿԱՆ ՎԵՐԱՏԵՍՈՒԹԻՒՆ

Թղթատարական վերատեսչութիւնը Թղթատարի յատուկ չորս վագոններ շինել տուած է, երկուքը Բուսէլիի և երկուքն ալ Սէլանիկի գծին համար. Այս վագոններ Կ. Պոլսոյ և Եւրոպայի միջեւ ուղղակի պիտի փոխադրեն թղթատարական պարտականութիւն. Այս առթիւ երեք նոր պաշտօնեաներ ևս պիտի յատկանան. Պետական Խորհուրդն հարկ եղած գործողութիւնները կատարելէ յետոյ, տեղեկագիրը պիտի մատուցուի Վեհ. Սուլթանի վաւերացման և կայս. Իրատէին երեւելէն յետոյ այդ վագոններու երթեւեկութիւնը պիտի սկսի. Այդ վագոններու իւրաքանչիւրին մէջ բաժանումներ եւ մահճակալներ պիտի դնուին.

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԱՆԿԵԼԱՆՈՑ

Համազգային Անկելանոցին ի նպաստ կազմակերպեալ ցուցահանդէսին համար հետեւեալ նուէրներն եղած են.

Անտառաց և Հանքաց ընդհանուր տնօրէն Գուլումճեան Վսեմ. Պետրոս էֆէնտիի կինը նուիրած է դրան երկու վարագոյրներ ոսկեթել բանուած.

Ռէժիի գումրէր Համամճեան Վսեմ. Սարգիս էֆէնտիի կինը՝ շրջազգեստի զանազան մասերու յատուկ զարդարանքներ՝ կապուտակ թաւշի վրայ ոսկեթել բանուած.

Միրկէօնի թուրք տղէկանց վարժարանին ուսուցչուհի Ֆրէնէլի հանում՝ երկու բարձեր, սպիտակ մնդուսի վրայ ասեղնահիւս (գէ-գէտ) բանուած.

Տպագրիչ Կարապետ էֆէնտի Քէշիշեան գիտական ու արուեստական նիւթեր պարունակող հարիւր հատոր փառակազմ գրքեր.

ՈՒՄՈՒՐՃՈՒ ԴԷՊՔԸ

Բ. Դուռը՝ Պ. Բէյմէնի աւազակաց ձեռքէն ազատուին իմանալով, հրամաններ տուած է Մրկրիվա Հասան Էսկիպ փաշայի, որուն պաշտօն յանձնուած է աւազակներն հալածել, ցպաշարել զանոնք, թէ՛ ցամաքի և թէ՛ ծովու ճամբով անոնց փախուստն արգիլել և հարկ եղած միջոցները ձեռք առնուլ ժամ առաջ ձերբակալելու համար այդ աւազակները.

ՍՊԱՆԻԱԿԱՆ ԴԵՍՊԱՆԱՏՈՒՆ

Զորեքշաբթի օրը տեղի ունեցաւ ի Պէօյիւքտէրէ սպանիական դեսպանատան շէնքին հիմնարկէքը. Հանդէսին կը նախագահէր սպանիական դեսպան Պ. Ռուալթա. Միջօրէին՝ հացկերոյթ մը տրուեցաւ.

Նորակառոյց շէնքը կը գտնուի Պէօյիւքտէրէի նաւամատոյցին հանդէպ. Առջեւը պարտէզ մը պիտի ունենայ. շէնքը յոյն-հռոմէական ոճով պիտի շինուի և պիտի աւարտի յառաջիկայ տարւոյ մայիս ամսուն մէջ.

Նախընթաց օրուան սատակաշունչ քամիի պատճառն նաւահանգստին մէջ խարսխեալ աւարտական Մէրէվէ և Սոֆոնէս շոգենաւք հոսանքին սաստկութենէն բռկրսան դէպի Սիրքէճի քշուիլ եւ ցամաքին զարնուելնուն մաղ մնացած էր. երբ նաւահանգստի վերատեսչութեան շոգեմակոյկ մը օգնութեան փութաց և այդ երկու շոգենաւերը Մախսուսէի շոգենաւներուն յատուկ խարսխանիշին կապեց.

—Հիւսէյին, Տուրսուն, Մուսթաֆա եւ Արիֆ անուն անձինք երէկ ի Լանկա գինետան մը մէջ արբենալէ յետոյ երբ իրենց տեղերը կը վերադառնային, ճամբան մէջերնին կռիւ մը ծագեցաւ եւ դաշոյններ քաշուելով ամէնքն ալ այլ եւ մէկքեր ստացան. Ոստիկանութեան պաշտօնեայք այդ կռուարարները ձերբակալեցին եւ Ոստիկանութեան Դուռը զրկեցին.

—Անցեալ յուլիս 20ին Ավլիօնեաի մէջ երկրաշարժ պատահելով շատ մը տուներ մասամբ կործաներ, ոմանց պատերը ճեղքուեր և մէկ քանին ալ բոլորովին կործաներ են.

—Այն պատանին, որ ի Մեծ կղզի մարմնամարզի փորձեր կատարած պահուն վիրաւորուած եւ յետոյ դեղադարձին կողմէ տրուած սխալ դեղի մը հետեւանօք վիճակն աւ

ՔԱՐՍԷՆ ՍԻԼԱՍ

(Ն. Վ. ԷԼԻՍ ԲԷՅԹ ԹԱԳՈՒՀԻ ՌՈՒՄԱՆԻՈՅ)

ԱՍԴՐԱ

Ի.

Պ.Ի.Տ., [Ուրբովին] 3 Մայիս 18..

Սիրելեալ մայր իմ,

Թէպէտ ահագին անջրպետով զատուած քեզնէ՝ սակայն զքեզ ինձ ամենամօտ կը զգամ։ Հեռագիր կը գմայլիմ այս հրաշագեղ գարնան վրայ իբրեւ թէ՝ այս վայրկենիս իսկ՝ ձիւներով շրջապատած չըլլայիր դու։ Տեսնէի՛ր ի՜նչ չքեղութիւն։ լիւլի ծաղկունք, սոխակներ, պարտիզին հինաւուրց ծառերը՝ որոց ստորոտը կը հոսի Սէրէթ՝ առաւօտուն մառախլապատ, եւ տունը դրուագեալ քաղցուէնեակներով որոց կապոյտ ստվերքը գլխէս վար կը կախուին, եւ իրենց ստուերը կ'երկարեն թէթիս վրայ։ Կկուին ձայնը կը լսեմ։ կկու, ո՞ւրչափ ժամանակ պիտի մնամ հոս։ Մի...երկու...երկու...։ Երկու շաբա՞թ, երկու ամի՞ն, թէ երկու տարի։ Ոչ, պարոն կկու։ այնչափ երկար առեն զատուած պիտի չմնամ սիրելի մօրէս։ Մնդղոյն ճաշի կը հրաւիրէ։ երթալու եմ։ Մարկօ չատ վախցուցած էր զիս իւր ամուսնով եւ սակայն բնաւ արջու չնմանիր։

Ժամ 9.— Բարիլո՛յս։ Ահա նորէն եկայ։ Թեզ կ'ուզեմ ըսել թէ հոս ամէն ինչ յոյժ գեղեցիկ է եւ բոլորովին կը սիրացնէ զիս։ Միայն Մարկոն կայ զոր չեմ հասկնար։ Ա՛նչափ տարբեր է ամուսնութենէն յառաջ եղածէն։ շատ աւելի ծանրագլուխ, աւելի հանդարտ, եւ աչքը միշտ ամուսնոյն վրայ։ Նա այնչա՜փ մեծ, այնչափ ուժեղ է։ Մեր ազգակ Մարկօն իրեն քով պատատուկի կը նմանի։ Շատ քաղցրութեամբ հիւրընկալեց զիս՝ գրեթէ հայրաբար՝ երբ կայարանն հասայ։ բայց ըսաւ թէ իւր կնոջ չէի նմաներ. թէ շատ աւելի թուխ եւ փոքրահասակ էի։—«Աւելի լաւ, ըսի իրեն, ասանը մէջ պակաս տեղ կը բռնեմ։»— յի՞նչպէ զրգռուած էի որ շատ խենթութիւններ կրնայի ըսել՝ եթէ իսկոյն կասքին գացած չըլլայինք՝ որ իւր ութ երիվարքը եւ զոյգ կառավարքը՝ զմեզ յափշտակեց տարաւ գարնանային իդէալ գիշերոյ մը մեզմ վերջալուսոյն մէջ։ Կը բաղձայի որ ուղեւորութիւնս երբեք չաւարտէր, եւ Սանտէր կը ծիծաղէր իմ խնդութեանս վրայ։

Մարկօ՝ յոգնած՝ լուեց վերջապէս։ բայց ես միշտ կը խօսէի, խենթի պէս էի։ Սանտէրի մտքէն ի՞նչ անցաւ արդեօք իր քեռւոյն վրայ։ Այն պահուն յորում լուսինը կը ծագէր՝ ջուրց ընդարձակ հունի մը մէջէն կ'անցնէինք՝ եւ աքանչելի էր տեսնել սեաւ մորուկները թաթիսել ջուրց շաղշղուն միանոյն մէջ, սուրհանդակք ազատակելով եւ խարազանք շառաչեցնելով, ջուրը լուսակայլակ ցայտելով ատողերու անձրեւի մը պէս։ Ճիշդ այն վայրկենին ասուպ մը տեսայ։ «Այսպէս կ'ուզեի ըլլալ՝ ազատակեցի։»—«Ինչո՞ւ մարիս՝ երբ փայլել հնար է։» ըսաւ Սանտէր։—«Վասն զի մարդ իւր իսկ բոցով կ'այրի։» պատասխանեցի ծիծաղելով մը։

—«Իւր թերութեամբքն հանդերձ կը սիրուի, կը վայելեմ. այդպէս չէ՞, Սանտէր։»

Մայրագութ դիմօք անոր կը նայէր։ Սանտէր գուրգուրանօք անոր ձեռքն համբուրեց։

«Գիտնալու ես, Ադրա թէ նա է ահա քու երկրորդ մայրդ։ Նա զիս իւր ծոցին մէջ չկրեց, իրա՝ այլ միշտ իւր բազկաց մէջ տարաւ զիս. իրեն կը պարտիմ քաղաքակիրթ անհատ մ'ըլլալս՝ փոխանակ պարզապէս ձիոյ պահապան մը կամ սթէփին որսորդ մ'ըլլալու։»

Ճաշարանը մոնաք՝ առկախ լապտերէ մը մեղմով լուսաւորեալ։ Սամովարը կը ծխէր։ կոգիով օծեալ հացի չերտեր եւ պաղ մսերն ախորժահամ երեւոյթ մ'ունէին

«Հապա տղա՞յքը» ազազակեցի։

Մարկօ սկսաւ խնդալ։

«Գիշերը՝ քնանալու սովոր են. կ'ուզո՞ս տեսնել։

Իսկոյն պիտի նեռուէի։ Սանտէր ինձ արգիլեց,

«Կեցցի՛ր։ նախ ընթրենք։ յետոյ պառկելու չգացած ատյայքը տեսնելու կ'երթանք։ Կէս ժամէն չեն թուչիր։ Հաճոյք մ'է որ կրնայ յետաձգուիլ։»

Պառաւ տիկինը խնդաց և թէյը պատրաստեց, մնդղեա Մարկօ բաղկաթոռի մը մէջ կ'լխնար։ Ցանկարծ ինձ հիւանդագին եւ ուժասպառ երեւցաւ՝ իբրեւ թէ այլեւս մարմին չունենար, այնչափ իւր մեծ հասակը կ'անհետանար այդ ընդարձակ բազկաթոռին խորը։ Իւր ձեռներն՝ յորոց յամր յամր ձեռնոցները կը քաշէր՝ անհանգստացուցիչ թափանցիկութիւն մ'ունէին։ Սանտէր անոր կը նայէր հոգատարութեամբ եւ ի սրտէ շնորհակալ կ'ըլլայի իրեն կոստեցուցած ըլլալուն անխորհուրդ դրդումս որ պիտի ստիպէր Մարկոն երկիցս սանդուխներէն վեր ելլելու։

Մեր բաժնուելու միջոցին՝ ուզեցի պառաւ տիկնոջ ալն համբուրել։ թոյլ չտուաւ այլ ինձ փարեցաւ իւր թեւերով և խանդաղատանօք պագաւ զիս՝ ըսելով.—«Փոքրիկ համբարձ։.—Նախ երգելս լսէ, պատասխանեցի իրեն։ Այն ատեն գացինք տեսնելու այդ շնորհալից պզտիկ էակներն երկար արտեւանամբք հովանաւորեալ վարագոյն պատերով. իբրեւ թէ այլ եւս իրենց բիբերը բացուելիք չունենային՝ եւ դեղձան կամ թուխ ոլորներով որ բարձին կը խառնուէին։ Սանտէր կը ճառագայթէր անոնց նայելով։ Ի՜նչպէս հուժկու մարդու մը բիբերը գիտեն անուշնալ։ Մարկօ՝ հոգատած՝ մատաղ աղջկան վրայ ծռեցաւ, ըսելով թէ շնչառութիւնը թասուն էր։ Թէ՛զմ մայր։ Ամենաբեր ճիւաղներ կը տեսնէ՝ ուր այլք կը ծիծաղին։

Այսօր՝ սեղանի վրայ՝ տեսայ մեր փոքրիկ սեպուհները. յիրաւի մէն մի գոհարներ են։ Գիտես, հապա չուրջս տաք տեսնեմ՝ ալ զանոնք զսպելու հնար չմնար։ Մարկօ ուզեց ծանրէն քաշել՝ բայց ստիպուեցաւ մեր հետ խնդալու։ Վարժուելիս՝ Օր։ Ուայսն հետ աշխատելով։ Ամուսնոյն կը հեռանայ նորա նեարչական տաղանդին։ Ահա երկուքն ալ կ'երթան գեղեն երկանքն ուռենիներ ուսումնասիրելու։ Այս պիսի սիրաբաղդից մէջ չեմ կրնար ըսել զեզ Սանտէրին բարութիւնն ու խոնարհութիւնը։ երբ տեսնէ որ յոգներ եմ՝ և թէ չեմ ուզեր այդ մեծ տան բանտարկեալ պահել տան մէջ՝ գիտէ ամէն փափկութեամբ բաղձանքս կանխել։ Աչքս նոցա ետեն է՝ ի՜նչ մեծ հաճոյքով։ քսակ քով գալով իրարու արժանիքը կ'աւելցնեն։ Կայ աւելի անուշ բան մը քան տեսնել որ մեր սիրած անձինքն իրարու սրտակից են։ Սանտէր կրկին աւելի մեծ կ'երեւայ մեր նկուն օգոյին քով։ Այդ մանկական հասակն անտարակոյս հայրիկին մօրմէն առած է։ Մեք աւելի մինակ և առայդ կերպով զարգացած ցեղմէն ենք։

Բարեո՛ւ մնա այսօրուան համար և քէնի մի պահէր յոյս աղջկանդ որ զքեզ փրկեսցէ սիրէ։ ՄԱՐԿՕ

3։

Պ.ՈՒՐՏԱ, 15 Մայիս 1..

Բարի Մայր իմ սիրեցեալ,

Ո՜հ ի՜նչ կեանք։ Իրաւ որ նմանը տեղ մը չգտնուիր։ Հիմայ ամէն օր ասպատանն այցելութեան կ'երթամ, եւ ամենէն ցերմ համակրութիւնը կը զգամ մըտրուհիներուն եւ նոցա խլական կայտիներուն։

Հապա մեր ձիարշաւնե՞ը։ Սթէփին անծայրածիր ասպարիզին մէջէն ձիավարել կ'ուզէի՝ աւելի անդի՛ն երթալ, մ'չտաւելի մնդէն։ բայց չհատարձակիր շատ ժամանակ փոքրիկին հեռու մնալ։ Սակայն աւելի կարճ ստոյգներու համար յանձնառու կ'ըլլայ։ ո՛ւրչափ վայելուչ է ձիու վրայ՝ հանդարտ ու շնորհագեղ։ Կարծեմ թէ ինձ պէս անտեղի արշաւներ ընելն կանաչի չգտներ։ Բայց ըսէ՛ մայրիկ, կարելի է քիչ մը ֆէոդալ ըլլալ արտաքուստ՝ եւ սրտանց նոյնչափ կին մնալ։ Մարկօ չտեսնուացած հիմակուընէ շատ աւելի աչխոյժ էր՝ թէպէտ երբեք ինձ չափ եղած չէ։ Նոր բարեկամուհի մ'ունիմ, Մէլանիան։ Կը ցաւիմ որ նշանուած է ասա թէ ոչ շատ սքանչելի պիտի ըլլար։ Բայց նշանդը միշտ մեր եռեւէն ունենալու ենք։ եւ սակայն Մարկօյի եւ Սանտէրի կիսուն շատ իրարու վրայ չեն դուրդուրար, այլ միակերպ փոքրիկ վէճեր ունին՝ որ ունկընդրաց համար բնաւ ախորժելի չէ։ Վերջերս միատեղ ձուկ կ'որսային։ այնչափ սատակի վէճ մ'ունեցան որ նոյն պահուն ձուկ մը լարը խզեց Մէլանիի ձեռքէն եւ հոսանքն ի մայր առաւ տարաւ։ Այնչափ ապշած էի որ միտքս չեկաւ երթալ բռնելու։ Մօրօշ ջուրը ցաթկեց՝ եւ սկնդիկի մը պէս թրմած եկաւ՝ առանց լարը բռնելու։ Մէլանի կը սրդողէր ու կը կոծէր, ես խնդալէս կը մեռնէի։ Ի՞նչ ծաղրական էր։ Ասոր վրայ երկուքն ալ ինձ դէմ դարձան։ եւ սակայն յանցանքն իմս չէր։ Մարկօ ինձ ըսաւ թէ ազէկ կ'ըլլար որ իրենց շրջագայութեանց չմասնակցիմ։ Այն օրէն հետէ կը զգուշանամ իրենցմէ։ եւ Մօրօշ եռեւէս ինկած է որ զիս իրենց հետ տանի իբրեւ թէ մինակ մնալուն ձանձրանային։ Բարի կը յայտարարէ թէ փոքրիկ հարիւրաւորները նշանածներու հետ ձկնորսութեան ելլելու չեն։ ասա թէ ոչ մին կամ մի սը ջուրը կ'ինայ, եւ շատ անգամ ամէնն ալ միատեղ։ Բաւական անուն է Օր։ Լուիզ տը Մէլդէն։ հնաշխարհիկ անձ մ'է։ կը պաշտեմ զնա։ Ամէն բան ի՞նչ նրբութեամբ, ի՞նչ շնորհալից կերպով կ'ըսէ. ոչ երբէք կը վշտանայ կամ կը նեղանայ։

Մարդու մտքէ չանցներ թէ քանիներ կը ընակին այս կարծեցեալ անապատին մէջ եւ ի՞նչ սիրուն այցելութիւններ կ'ընդունուին։ բայց բազմութեան մէջ ձանձրացուցիչներն ալ կան՝ անտարակոյս։ Այն ատեն խօսելու չտալու համար դաշնակին վրայ կը նեռուիմ։ Մարկօ եւ ես՝ երկանուագներու հաւաքածոյ մը բերել տուինք զոր եռանդեամբ կ'ուսանիմք։ Սանտէր մոռդիւր կ'ունկընդրէ մեզ՝ Մարկոյին ներդաշնակ ձայնն իմ ձայնիս կցորդած որ շատ նուազ գիւրաթեք է։ Երիս մանչերը զանգակի ձայնի պէս յստակ կնիք մ'ունին։ Բօսդի վեցամեայ՝ սրդէն կը կցորդի իւր եռամեայ եղբօր, եւ Մարիամիկ անոնց երեսը կը նայի՝ մանրիներով ամանակ զարնելով։ Զանոնք տեսնելէ ու լսելէ մարդ չկշտանար։ Մարկօն դաշնակի մօտ՝ նուրբ ձեռքովը համաձայնութիւնները զարնելով՝ եւ իւր զաւակաց երգին օժանդակելով—Մարիամիկին պզտիկ հրեշտակային՝ բոլորովին Ռափայելեան գլուխը՝ ծնգայը վրայ, իւր մեծ կապոյտ աչերով, ծանր կերպարանօք իւր մեսաքսեայ դեղձան մազերով։ Բօսդի՝ մեծ՝ նիկար՝ աշխոյժ՝ թուխ։ Նիքու՝ հեզ եւ երկչոտ կաղին աչերով ու սոսկեղը, իւր մօր պատկերը։ Սանտէր դիմացնին նստած է ծխելով, լրագիր կարդալ կեղծելով՝ մինչեւ որ զայն ձեռքէն առնեմ՝ անոգաստ նեղութիւնէ մը ազատելու համար։ Հատ պատեհի՝ ես ալ իմ մտաս կը կատարեմ։ այն ատեն բնական խմբերգ մը կ'ըլլայ։ Ցետոյ կ'ազատիմ։ «Կարգը Տօսայ՝ նն է։»—եւ նա շատ ազէկ կ'երգէ՝ ճաշակով եւ տաղանդով։ Այսպէս ամ ա խորժելի կերպով ժամանակ կ'անցուի գիւղը, ուշիմ մարդիկներով, երամ չտուեմ թեամբ գրքերով եւ մեներով—ներն ալ չմոռնանք։ Բնականապէս ասոնք իմ մեծ բարեկամներս են։ Անոնց պատճառաւ՝ ինձ բոլորովին պարզ հանդերձներ առաքէ։ վրաս գլուխս անդադար կ'ապտուտեն, բայց շատ թեթեւ հանդերձներ, վասն զի հոս մշդամուկ ատաքութիւն մը կայ։ Զիս կը հեգնեն եւ կ'ըսեն, «Տաքութի՞ւն կ'ըսես ասոր։.— կեցցի՛ր յուլիսը գայ։»—Յուլիսին՝ Սէրէթին մէջ պիտի սուզիմ եւ ալ դուրս պիտի չելլեմ։ շատ գիւրին պիտի ըլլայ։ Ինձ այնպէս կուգայ թէ արդէն ջուր մտնելու չափ օգտաւատ է։ բայց Սանտէր թոյլ չտար՝ ասենդերուն ստամեռնու։ Գիտես յիր՝ մայր՝ ո՛ւրչափ բարի է Սանտէր։ Հայրս ըլլար ասելի իմաստութեամբ եւ քաղցրութեամբ չէր կրնար խնամել զիս։

Չինք ճանչնալէս ի վեր՝ աղէկարշ կսկիծ մը կ'զգամ հայրս այլ եւս չունենալուս, որոյ ազատ յիշատակը միայն միտքս մնացած է։ Ինչպէ՞ս պիտի պաշտէի զինք։

(Շա՛ր.—ալէի) ԲՈ ԱՄԻՐԱՅ

ՄԻՍԱՔԵԱՆ

Զ.

ՀԱՏՈՒԱԾՆԵՐ ԻՐ ԳՐԱԾՆԵՐԻՆԵՆ։—ԲԱՆԻ ՄԸ ԽՕՍՔ ԻԲՐԵՒ ՎԵՐՋԱԲԱՆ

18 տարի ամփոփուած ապրեցաւ Ս. Կարապետի պանդոկին մէջ. իր զբաղմունքն եղած էին գլխաւորաբար իր մատնաւոր դասերը. եռթը տարւոյ չափ Ֆրէնկեան Մարիէ է Ֆիլոսի տունը յանձնած է իբրեւ ուսուցիչ. քարերու՝ իր ժիգոյն աշակերտներէն չեն։ Իր մտքը զինքը գրաւած է երկիւղած քրիստոնէի մը պէս, որ իր հոգեւոր ուղեւորութեանը մէջ պատրաստ կ'ունենայ իր անհրաժեշտ պաշարը։ Օրհասէն երեք օր առաջ հաղորդուած էր եւ Աւետարան լսած։

Կեանքի այս վերջին հատուածն եթէ բան մըն ալ շարժէ յաշս մեր նորաբեր գրագիրաց, ոչինչ չէ իբրեւ արձանագրութիւն յիշատակութիւն։ կենագիր հեղինակներ զանց ըրած չեն։ տեսնուելու անձանց վրայ տեսնուած է այդ բարեպաշտութիւնը։ Բաւական՝ վերջին թռչակի պատմութիւնը հեռաքրքրական է։

«Բաւական ընութեամբ ազատամիտ, գուեհիկ մտքերու պէս խազալիկ չէրաւ այն հաւատալիքները, որոց մէջ ծնած էր, եւ մեծ ապացոյց մը տուաւ որ այդ, թէեւ ընդ երկար անձանօթ։ Իր մանուանէն եռթը տարի առաջ, վանքերու օրէնքին ջերմագոյն կուիներուն մէջ, երբ մահաշունչ սրածութիւն մը (épidémie) Թուրքն անմարգի կը կացուցանէր, Բաւական ջանաց իրեն համար եկեղեցական օգնութիւններն ապահովել։

«Առաւօտ մը ամէն բան հանդարտ սրտով կարդադրած էր աւագ երէցին հետ, զոր իր բարեպաշտիկ գործոցն ու խորհրդոց հաղորդ ըրած էր։ Խօսակցութեան վերջին վարկենին՝ վրայ կը հանուի Ռաթիածծի, քիչ յետոյ ներքին գործոց տեսուչ։ եւ Բաւական պատուադիր մեծարանօք երեցը ճամբու դնելէն ետքը, կը դառնայ իր պաշտօնակցին եւ կ'ըսէ ազնուասիրտ պարզութեամբ, թէ ամէն բան կարգադրեցի անոր հետ այն պարագային համար, ուր մահը կրնայ վրայ հասնիլ։» Եւ զարմանալին այս է որ, եռթը տարի ետքը, Բիւմոնտացի նախարարը, որ եղած էր տպա Իտալոյ թագաւորութեան առաջին նախարար, իր մահուան անկողնին մէջ կը տեսնէր այն քահանան, եղբայր Ճիաքօմոյ, որ հաւատարիմ իր 1854ի խոստմանն հասած էր։ (1)

Միսաքեանի բարձին տակ գտնուած վերջին գիրքն եղաւ Շնորհալւոյ Բարեխօսքը. այդ գիրքն եղած է իր գրաբառ առաջին դասագիրքը։

Ահա Միսաքեան իր կեանքի մթութեանը մէջ։

